ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՃԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(28 մարտի, կիրակի, 1999 թ.)

«Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն»:
(Հովհ. ԺԲ 13)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Օրհնեալ ես դու՝ Տիրոջ անունով եկողդ:

Այս ակնարկությունը, սիրելիներ, վերաբերում էր մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, երբ Նա մուտք էր գործում Երուսաղեմ՝ մասնակցելու Զատկական տոնակատարությանը: Ավետարանիչներն այդ միտքը ներդաշնակաբար մեզ են փոխանցում, արտահայտում Քրիստոսի Երուսաղեմ մուտք գործելու պահին Նրան օվսաննաների եւ ուրախության աղաղակների տարափով դիմավորող ժողովրդի զգացումը: Ժամանակային առումով հեռավոր ընթերցողներս նույնիսկ մի պահ մտածում ենք. արդյոք նրանց մեջ չէ՞ր խոսում մարգարեական այն շունչն ու ոգին, որը հատուկ էր Սիոնի գեղատեսիլ բլուրների վրա կամ նրանց շրջակայքում ապրող այդ ժողովրդին, որն իր հոգում իսկապես կրում էր Աստծու ներկայությունը, Նրա պատկերը եւ այդ խորունկ հավատով թե՛ իր կյանքն էր ապրում եւ թե՛ մի մեծ հույսի ակնկալիքով հայացքն ամեն անգամ բարձրացնում դեպի երկինք:

Եվ ահա գալիս է Մեկը, որի մեջ նրանք տեսնում էին երկնային առաքյալին, օվսաննաներ ու օրհնություն տալիս Նրան:

Այսօր մեր եկեղեցին հիշատակում է այդ դեպքը՝ Քրիստոսի մուտքը Երուսաղեմ: Ճյուղերով, ծաղիկներով եւ գեղեցիկ արտահայտություններով Նրան դիմավորելու այդ պատկերից ներշնչված, եկեղեցին այս տոնն անվանել է Ծաղկազարդ, այսինքն ծաղիկներով, բնության գեղեցկությամբ զարդարված: Հիրավի այն համապատասխանում է բնության շքեղ զարթոնքին, որը նաեւ զուգորդվում է հավատացյալ քրիստոնյայի՝ Աստծուց իր կյանքում վճռական միջամտություն, հույսի շող ստանալու լավատեսությամբ: Աստծու արարչագործության գեղեցկությունն է նաեւ, որ եկեղեցին տեսել է այս տոնի մեջ, եւ հավատացյալները այդ ապրումը ուժգնորեն կրում են իրենց հոգիներում: Սա ամեն տարի այս օրը մասնավոր ուրախություն ենք ունենում եւ, կարծես, հոգեպես կապվում այն ժամանակներին, երբ խանդավառ բազմությունը տեսնում էր Հիսուսին: Մեզանից շատերը կարծես թե շոշափելիորեն զգում են Հիսուսի ներկայությունը, երբ ուռենու ճյուղերը ձեռքներին, իրենց մտքում ոգեկոչում կամ շրթների վրա այդ բառերն են արտասանում: Այս ամենը ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ մեր հավատքի, հույսի արտահատությունը ու դրանց համատեղ ամբողջությունը:

Այս օրերին, իրոք, եկեղեցին գտնվում է Գալստյան գաղափարների

խորհրդածության ու մտորումների մթնոլորտում: Գալուստն իսկապես վերաբերում է մեր Երկնավոր Տիրոջը, որն ինչպես հրաշալի կերպով մուտք էր գործում Երուսաղեմ, այնպես էլ ամեն անգամ մուտք է գործում մեր հոգիներից ներս: Անցյալ՝ Գալստյան կիրակիի խորհրդի մեջ խտացած էր Քրիստոսի Գալստյան գաղափարը: Այն նկատի ունի երկու գալուստները. Քրիստոսի մարդեղությամբ գալուստը, երբ Նա սրանից երկու հազար տարի առաջ եկավ, եւ այն մյուս գալուստը, որ մենք Երկրորդ Գալուստ ենք անվանում, ու այնքան անձկալի սպասում: Եվ ահա այսօր, երբ ոգեկոչում ենք այդ պատմական դրվագը՝ Քրիստոսի մուտքը Երուսաղեմ՝ համեստ կերպով, նստած ավանակի վրա, միաժամանակ հաստատում ենք, որ ժողովուրդը դիմավորում էր Նրան իբրեւ մի հզոր արքայի: Ահա այդ պատկերն է, որ ամեն անգամ հառնում է մեր մտքում, եւ Քրիստոսի ներկայության զգացումով մենք լցվում ենք հույսով, մեր հոգիները ողողվում են գալստյան ուրախությամբ եւ խոստումով:

Ի՞նչ էր նշանակում ավանակի վրա նստած Երուսաղեմ մուտք գործելը. Հիսուս դրանով ցույց տվեց մեծագույն համեստություն այն մարդկանց, ովքեր հաճախ ասում էին. «Դո՛ւ ես ամենահզորը եւ Դո՛ւ ես այն Փրկիչը, որին ակնկալել էինք եւ որից մեծ սպասումներ ունենք, կատարի՛ր դրանք»: Նա Ինքն Իրեն համեստորեն բացահայտեց ժողովրդին, եւ մարգարեական ոգով այդ ժողովուրդը Հիսուսի անհատականության մեջ իրապես զգաց այն երկնավոր հզորությունը, որ Նա գերազանցապես եւ քահանա է եւ արքա: Այն բոլոր հատկանիշները, որոնք Քրիստոսին էին վերագրում, դրանք այսօր եւս շարունակում են շարժել աշխարհը՝ համեստություն, հեզություն, ինչ որ Նա ցույց տվեց, Նստված լինելով հանդերձ: Բայց նաեւ այն հզորությունը՝ հատուկ երկրավոր իշխողներին եւ տերերին, որն իսկապես Հիսուս կրում էր Իր մեջ, սակայն, ի տարբերություն նրանցից շատերի, հիմնված միմիայն արդարության վրա, որը տեսան եւ հաստատեցին հավատացող աչքերը, ու նրանց շուրթերը փառաբանեցին Նրան:

Սիրելիներ, դրա մեջ եւս պատգամ կա, այն, որ մենք մեր աշխարհային գործերում, մեր առօրյա կյանքն ապրելիս եւս պետք է ներշնչվենք այդ բոլոր հատկանիշներից. Քրիստոս իսկապես հեզ էր, խոնարհ, մեծ, հզոր, ուներ իշխանություն, եւ երանի մեզանից յուրաքանչյուրն իր գործունեությունը, իր կյանքն ապրի Քրիստոսի ցույց տված արդարությամբ:

Այսօր վերստին Նրա Գալստյան ակնկալության հույսն է, որ ողողում եւ փառավորում է մեր հոգիներն ու սրտերը: Մենք պետք է գիտակցենք նաեւ, որ Եկեղեցում Քրիստոս մնայուն կերպով ներկա է Իր բոլոր պատգամներով, Իր կենցաղով, Իր կյանքի ոճով ու ձեւով: Եթե հիշում եք, Երուսաղեմ մտնելուց առաջ Հիսուս բժշկություններ կատարեց, կույրերին բժշկեց, հիվանդներ առողջացրեց, երբ Երուսաղեմ մտավ՝ իբրեւ մի արքա, անմիջապես Տաճար բարձրացավ եւ այնտեղ կարգ ու կանոն հաստատեց, ցույց տալով, թե Եկեղեցում ինչպես պետք է գործի մարգարեական ոգին ու շունչը, թե յուրաքանչյուր հավատացյալ ինչպիսի գիտակցությամբ եւ կարգապահությամբ պետք է իրեն դրսեւորի եւ իր տեղը պատկերացնի Եկեղեցու մեջ: Երբ մենք երկու գալուստների մասին ենք մտածում, մարդեղությամբ արդեն իսկ կայացած գալստյան եւ այն մեծ Գալստյան, որ պիտի լինի, կարծես թե իսկապես մի

գիրեցիկ շղթայով Քրիստոսի մնայուն ներկայությունն է դրոշմվում, հաստատ- վում Եկեղեցում եւ ոչ միայն եկեղեցում, այլեւ յուրաքանչյուր հավատացյալի կրծքում, հոգում, եւ ամեն մարդ իսկապես բոցավառվում է Ծաղկազարդի տոնից ճառագայթող ուրախությամբ:

Մեր հայրերն ու նախնիները շատ վաղ ժամանակներում զգացին Քրիստոսի հզորությունը, զգացին Նրա Ավետարանի բարձրությունն ու մեծու- թյունը, այնտեղ արծարծվող բոլոր գաղափարների օգտակարությունը եւ ընդունեցին այն մեր երկրում՝ Հայաստանում, հրաշակերտելով եւ մարմնա- վորելով այն մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիով, որի մեջ դարեր եւ դարեր հայ ժողովրդի հազարավոր եւ միլիոնավոր զավակներ են ծնվել, սնվել հոգեւին, դաստիարակվել, երջանիկ ապրել, իրենց հոգիների փրկու- թյունը գտել: Այն գերազանցապես բավարար է յուրաքանչյուր հայ հավա- տացյալի համար, որը մտահոգ է իր արդար եւ օգտակար կյանքի եւ հոգու փրկության համար:

Ահա այսօր նույնն է կատարվում մեզ հետ: Կարծեք թե մեզ հոգեպես պատրաստված ենք զգում հաջորդ կիրակի օրը դիմավորելու Տիրոջ Հարության հրաշափառ տոնը: Եվ կարծեք թե այս ողջ շաբաթվա ընթացքում Հարության ուրախության ակնկալությունը, մեր հրճվանքն ու բերկրանքը ավելի կատարյալ ու լի պիտի լինեն, քանի որ վաղը Վեհափառ Հայրապետը պիտի ժամանի Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Զատկին արդեն բազմած կլինի իր գահին ու իր օրհնությունները կբաշխի բոլորիս: Դուք գիտեք, որ Նա գրեթե մեկ տարի ապաքինման մեջ էր գտնվում, քանի որ փոքր-ինչ տկարացած էր եւ այժմ բավարար չափով կազդուրված վերադառնում է՝ ավելի եւս ուրա- խացնելու մեզ, մխիթարելու մեր հոգիները: Սակայն քանի դեռ Վեհափառը տակավին գտնվում է նման առողջական վիճակում, պարտք ենք զգում այս պահին մեր աղոթքները վերառաքել առ Աստված եւ խնդրել Բարձրյալից կատարյալ առողջություն Հայոց Հայրապետի համար:

Ուրեմն, սիրելիներ, թող Աստված Հայ Եկեղեցին Նրա գահակալով միշտ պահի Իր օրհնության ներքո, որի մեջ մեզանից յուրաքանչյուրը կգտնի այն ամենը, ինչը կարող է մեզ հոգեկան սնունդ տալ, եկրավոր կատարյալ երջան- կություն պարգեւել, արժանացնել հավիտենական կյանքի եւ փրկության: Լայնորեն բանանք մեր հոգիների դռները, որպեսզի այսօր Երուսաղեմ մուտք գործող Երկնավոր Տերը մուտք գործի այնտեղ՝ ավելի մաքրելով, կատարյալ դարձնելով մեզ եւ առավել եւս բարձրացնի քրիստոնյայի բարձր պատվան- դանի վրա: Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ամենառատ օրհնությունները լինեն մեզ հետ, եւ մշտանորոգ Սուրբ Հոգու ներշնչումը մշտապես առաջնորդի մեզ:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»: